

# **ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱԴԱՅՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆՉԱՓԱՅԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՅԱՅՏՄԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՇՏԱԲ ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Սույն հետազոտությունը կազմակերպվել է «Նոր Մերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության կողմից իրականացվող «Անչափահաս երեխաների աջակցման և ինտեգրման ծրագրի» շրջանակում, որը ֆինանսավորվում է ԱՄՆ պետդեպարտամենտի՝ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի և «Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից: Հետազոտության մեջ արտացոլված կարծիքները և տեսակետները ծրագիրն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչներինն են և դուրս են ծրագիրը ֆինանսավորող կառույցների պատասխանատվության շրջանակից:

## Բովանդակություն

Ներածություն	3
Մեթոդաբանական մաս	5
Հարցված անապահով ընտանիքների անչափահաս երեխաներին վերաբերող հիմնախնդիրներն ու այդ հիմնախնդիրների առաջացման պատճառները	6
Սոցիալ - տնտեսական ծանր վիճակ	6
Սոցիալ-հոգեբանական խնդիրներ և ծնողավարության հմտությունների բացակայության խնդիր	13
Կրթական, դաստիարակչական և մշակութային խնդիրներ	16
Եզրակացություն	19
Առաջարկությունների փաթեթ	21
Հավելված 1	23
Հավելված 2	24

## Ներածություն

Յուրաքանչյուր պետություն, որն իր առջև խնդիր է դրել լինել սոցիալական, առաջնահերթ ուշադրությունը պետք է սևեռի առողջ, սոցիալապես լիիրավ անդամի ձևավորմանը և զարգացմանը: Յուրաքանչյուր պետության ապագան է հանդիսանում նրա առողջ սերունդը: Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցի՝ 2013 թվականի դրությամբ Հայաստանում աղքատ է բնակչության 32,4 տոկոսը, նրանցից 13,5 տոկոսը շատ աղքատ է, իսկ 2,8 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ: Շիրակի մարզում աղքատ է մարզի բնակչության մոտ կեսը՝ 46 տոկոսը:<sup>1</sup>

2013 թվականի ապրիլ ամսվա դրությամբ մարզկենտրոնում գրանցված գործազուրկների թիվը կազմել է 7212 մարդ և աճը նախորդ տարվա ապրիլ ամսվա դրությամբ կազմել է 594 մարդ:<sup>2</sup>

Աշխատանք փնտրողների թիվը 2014 թվականի մարտի վերջի դրությամբ Շիրակի մարզում կազմել է 9101 մարդ, նրանցից 8386 եղել են գործազուրկներ: Գործազուրկներից 7536 եղել են ք. Գյումրիից:<sup>3</sup>

Համաձայն երեխայի իրավունքների հռչակագրի, «յուրաքանչյուր երեխա ունի կրթվելու, սիրված և հասկացված լինելու իրավունք՝ իր ընտանիքի կողմից, բայց վերջիններիս բացակայության կամ անկարողության դեպքում պետությունը պետք է փոխարինի նրանց»:

Ցավոք, բազմաթիվ ընտանիքներ այսօր ի վիճակի չեն հոգալ երեխաների անգամ առաջնային կարիքները: Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալական վիճակը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ժամ առ ժամ աճող արտագաղթը, գործազրկությունը և աղքատությունը իրենց դրոշմն են թողնում անչափահաս երեխաների ներկայի և ապագայի վրա:

Գրանցված հանցագործությունների քանակն ըստ ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և «Զվարթնոց» օդանավակայանի՝ Շիրակի մարզում 2013 թվականի հունվար-մարտ ամիսներին կազմել է 202 միավոր, իսկ 2014 թվականի հունվար-մարտ ամիսների 282 միավոր:<sup>4</sup>

Ըստ ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության

<sup>1</sup> armstat.am

<sup>2</sup> 2013 թվականի առաջին եռամսյակի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծական զեկույց

<sup>3</sup> armstat.am

<sup>4</sup> armstat.am

տեղեկատվության, 2013 թվականի տարեվերջի դրությամբ հաշվառվել է 13 մուրացիկ և թափառաշրջիկ անչափահաս, որոնցից մեկն է եղել Շիրակի մարզից:<sup>1</sup>

«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական կազմակերպությունը՝ «Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ, իրականացնում է «Անչափահաս երեխաների աջակցման և ինտեգրման ծրագիր», որն ուղղված է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում անապահով ընտանիքների աջակցմանը և Գյումրու ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքում /այսուհետ՝ ԱԳԲ/ գրանցված անչափահաս երեխաների աջակցմանն ու ինտեգրմանը համայնքում: Ծրագրի շրջանակում, փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում կազմակերպվել է սոցիոլոգիական հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել Շիրակի մարզի Գյումրի քաղաքում անապահով ընտանիքների հիմնախնդիրները, դրանք ծնող պատճառները և առաջարկել այդ խնդիրների հաղաթահարման համար համապատասխան լուծումներ:

---

<sup>1</sup> [armstat.am](http://armstat.am)

## Մեթոդաբանական մաս

Սոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: Սոցիոլոգիական հետազոտության նպատակն էր բացահայտել Գյումրու անապահով ընտանիքների անչափահասներին վերաբերող հիմնախնդիրների պատճառները և առաջարկել համապատասխան լուծումների առաջարկությունների փաթեթ:

Հետազոտությունն իրականացվել է որակական երկու մեթոդի՝ փորձագիտական հարցազրույց և ֆոկլուս խմբային քննարկման կիրառմամբ: Փորձագիտական հարցազրույցներ անցկացվել են հետևյալ հաստատությունների և/կամ մարմինների 17 փորձագետների հետ.

➤ Գյումրու քաղաքապետարանի անչափահասների հարցերով հանձնաժողով /2 փորձագետ/,

➤ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կանանց, երեխաների և ընտանիքի իրավունքների պաշտպանության բաժին /1 փորձագետ/,

➤ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ /1 փորձագետ/,

➤ Գյումրիում գործող հասարակական կազմակերպություններ /թվով 3 հասարակական կազմակերպություններ, 3 փորձագետ/,

➤ Ավագ դպրոցներ /թվով 3 ավագ դպրոցներ և մեկ քոլեջ, 4 փորձագետ/,

➤ Բուժ. հաստատություններ /թվով 3 պոլիկլինիկաներ, 3 փորձագետ/,

➤ Նաև քրեական գործերով փաստաբանների հետ /3 փաստաբաններ/:

Էքսպերտային հարցումն իրականացնելու նպատակով նախապես ուսումնասիրվել է դաշտը, այնուհետև ընտրվել են այն հաստատություններն ու փորձագետները, ովքեր առնչվում են տվյալ ոլորտի հետ: Հարցման ընթացքում որպես ուղղորդող գործիք է հանդիսացել նախապես կազմված հարցաշարը, որն էլ կցվում է զեկույցին (Հավելված թիվ 1):

Նախատեսվում էր իրականացնել էքսպերտային հարցում նաև Գյումրու ոստիկանության ԱԳԲ-ում, սակայն ԱԳԲ-ի փորձագետները հրաժարվեցին մասնակցել հարցմանը<sup>1</sup>:

Սոցիոլոգիական հետազոտության ընթացքում իրականացվել է նաև 2 ֆոկլուս-խմբային քննարկումներ, յուրաքանչյուր խմբում 6 մասնակից: Հետազոտությունն իրականացվել է անապահով ընտանիքների չափահաս

<sup>1</sup> Հարցազրույցին մասնակցելու խնդրանքով 26.02.2014 համապատասխան նամակ էր ուղարկվել ԱԳԲ: Նշված նամակին կցված է եղել նաև հարցազրույցի հարցաշարը:

անդամների՝ մասնավորապես ընտանիքի 10 մայրերի, 1 հոր և 1 տատիկի /որը հանդիսանում էր անչափահաս երեխաների խնամակալ/ հետ: Ընտրանքը կազմվել է կազմակերպության կողմից իրավաբանական խորհրդատվություն ստացող ընտանիքների թիրախային խմբից:

**Հարցված անապահով ընտանիքների անչափահաս երեխաներին վերաբերող հիմնախնդիրներն ու այդ հիմնախնդիրների առաջացման պատճառները**

Անապահով ընտանիքների հիմնախնդիրները բազմաթիվ են և բազմապիսի: Ինչպես նշեց հարցվող փորձագետներից մեկը. «Կարող ենք վերցնել աշխարհի երեսին եղած բոլոր հիմնախնդիրները և վերագրել անապահով ընտանիքներին: Չե՛նք սխալվի, քանի որ նրանք իրենց վրա են կրում գրեթե ամեն տեսակի հիմնախնդիր»:

Հետազոտության սույն զեկույցում հանգամանորեն ներկայացվում են հարցվողների կողմից առաջադրված յուրաքանչյուր հիմնախնդիր և այդ հիմնախնդրի առաջացման պատճառները:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքում առանձնացվում են հետևյալ բնույթի հիմնախնդիրները.

- Սոցիալ - տնտեսական ծանր վիճակ,
- Սոցիալ - հոգեբանական խնդիրներ և ծնողավարության հմտությունների բացակայություն,
- Կրթական, դաստիարակչական և մշակութային խնդիրներ:

**Սոցիալ - տնտեսական ծանր վիճակ:** Փորձագետներից տասը և ֆոկուս խմբային քննարկման բոլոր մասնակիցները նշում են, որ Գյումրի քաղաքի բնակչության սոցիալական վիճակը բավականին ցավալի է: Բացի այն, որ բնակչությունը իր վրա է կրում աղքատ, գործազուրկ լինելու ծանր բեռը, օրեցօր աճում է նաև արտագաղթը: Ըստ հարցվողների, Գյումրիում ընտանիքների մեծ մասը մնացել է առանց տան տղամարդկանց, քանի որ նրանք մեկնում են արտերկիր՝ աշխատանք փնտրելու նպատակով: Ընտանիքի բարեկեցությունն ապահովելու մեծ բեռն ընկնում է կնոջ ուսերին: Սակայն վերջինս ի վիճակի չէ հոգալ ընտանիքի մնացած անդամների կարիքները: Ֆոկուս-խմբի մասնակից, մենակ ընտանիք ղեկավարող

կանանցից մեկը նշել է, որ ինքը փորձում է գտնել աշխատանք, սակայն ունի փոքր անչափահաս երեխա, որը պետք է հաճախի մանկապարտեզ, որպեսզի մայրն ունենա աշխատելու հնարավորություն: Գյումրիում մանկապարտեզները վճարովի են և սա հանդիսանում է խնդիր անապահով ընտանիքների համար: Մանկապարտեզների ամսական վճարը կազմում է 7,000 դրամ, որը՝ ըստ խմբի բոլոր տասներկու մասնակիցների կարծիքի, բնականաբար անհնար է վճարել:

Բացի դա, Գյումրիում առկա է նաև մեկ այլ չափազանց կարևոր խնդիր: Բնակչության զգալի մասը անօթևան է և բնակվում է տնակներում: Պայմանները սարսափելի են՝ հատկապես աշնան և ձմռան ամիսներին: Բացակայում են տարրական կենսական անհրաժեշտության պայմանները: Բնակչությունը չի կարողանում հոգալ վառելիքի խնդիրը, և տնակներում անգամ բաժակում լցված ջուրը ձմռան ամիսներին սառչում է: Կան ընտանիքներ, որտեղ տղամարդը բացակայում է, կինը ունի հաշմանդամություն, և ոչ ոք չի կարող հոգալ տվյալ ընտանիքի երեխաների կարիքները: Մասնակիցների կարծիքով, քաղաքում բացակայում են աշխատավայրեր: Հարցվողներից յոթը նշել են, որ իրենք գործազուրկ են և գտնվում են ծայրահեղ աղքատության մեջ:

Փորձագետներից մեկը պատմել է չափազանց ծանր մի դեպք, թե ինչպես Գյումրի քաղաքում գտել են մի բազմազավակ ընտանիք, որտեղ երեխաներից մեկը սովամահ էր եղել: Փորձագետը պատմում է, որ իրենք տեղեկություն ստանալով այդ ընտանիքի մասին, անմիջապես գնացել են տվյալ վայրը, որտեղ նրանք ապաստան էին գտել՝ իրենց հետ տանելով անհրաժեշտ ամեն բան՝ սնունդ, հագուստ և այլն: Սակայն արդեն չափազանց ուշ էր, երեխային այլևս հնարավոր չէր փրկել: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ՝ համաձայն փորձագետի կարծիքի, հիմնականում այն ընտանիքներում, որտեղ առկա են ծայրահեղ պայմաններ, գործազրկության, աղքատության գերխնդիր, գրեթե միշտ ունեն ծնելիության բարձր մակարդակ: Այսպիսի ընտանիքները հիմնականում բազմազավակ են: Անապահով կամ կյանքի դժվարին պայմաններում գտնվող ընտանիքները ունեն նաև մեկ այլ առանձնահատկություն: Այս ընտանիքները հիմնականում ապրում են հասարակությունից մեկուսացված համայնքներում, ժամանակավոր կացարաններում և ունեն շփման, հաղորդակցման խնդիրներ:

Գյումրիում կան նաև ծնողներ, ովքեր սոցիալական ծանր պայմաններից

դրդված, երեխաներին տանում են տարբեր խնամքի հաստատություններ: Երեխան ստիպված է լինում ապրել նման հաստատությունում՝ ծնողական խնամքից զուրկ:

Փորձագետներից մեկը նշում է, որ անապահով ընտանիքներում երեխաները թերսնված են, նրանց ամենաառաջնային կարիքներն անգամ բավարարված չեն, ծնողները չեն կարողանում արձագանքել երեխայի պահանջմունքներին, երեխաները հիմնականում ապրում են մեկ ծնողի հետ, հաճախ ստիպված առնչվում են գիշերօթիկ հաստատությունների հետ: Ընտանիքի բարեկեցության համար գումար հայթայթելու անկարողությունից, ծանր սոցիալական պայմաններում գտնվող ծնողը մոռանում է սեփական երեխայի մասին:

Ֆոկուս-խմբի մասնակիցներից մեկը նշում է, որ ինքն ամբողջ կյանքում ունեցել է աշխատանք և միշտ կարողացել է վաստակել իր գումարը: Այսօր նա ստիպված է դիմել տարբեր կառույցների՝ աջակցության, որևէ նյութական օգնության համար: Իր համար բավականին վիրավորական և անհարիր է լինել այդ իրավիճակում: Կցանկանար ունենալ աշխատանք և ստիպված չլինել սպասել որևէ մեկի օգնությանը: Այնինչ, այդ օգնությունն էլ գրեթե չի լինում, քանի որ ոչ ոքի չի հուզում իր կողքին ծայրահեղ վիճակում գտնվող ընտանիքը: Ֆոկուս-խմբի անդամներից տասը նշել են, որ բազմիցս դիմել են ՏԻՄ-ին՝ օգնության ակնկալիքով, սակայն երբևէ չեն ստացել ոչ մի տեսակի օգնություն: Մասնակիցներից մեկը նշել է, որ քաղաքացին ոչ մի կերպ չի կարողանում մուտք գործել քաղաքապետարան կամ մարզպետարան որևէ նպատակով: «Բազմիցս փորձելուց հետո, մեկ անգամ հնարավոր եղավ մուտք գործել այդ կառույց, որտեղ ինձ տարան մի աշխատասենյակ, սկսեցին հարցաքննել, այնուհետև ասացին, թե ոչնչով օգնել չեն կարող»: Դիմումներ, նամակներ ուղարկելու դեպքում 10 մասնակիցներ նշել են, որ չեն ստանում ոչ մի արձագանք և պատասխան: «Այդ արհամարհանքը չափազանց վիրավորական է և անտանելի»: Նրանք նշել են, որ իրենց ակնկալիքները կապված են ոչ թե պետական որևէ կառույցի հետ, այլ ավելի շատ հասարակական կազմակերպությունների (ՀԿ) և տարբեր միջազգային կառույցների հետ: Ի հակադրություն այս կարծիքի, պետական կառույցների փորձագետներից երեքը նշել են, որ իրենց կողմից ցուցաբերվող օգնությունն ու աջակցությունն բավական մեծ է: Փորձագետներից մեկը գտնում է, որ թերևս մարդն է այդպիսին: Եթե կարողանում է հեշտ ճանապարհով՝ նպաստ,



ժամանակ առ ժամանակ հատկացվող գումար ստանալ, բավարարել իր կարիքները, ապա նա չի ցանկանա աշխատել և այդ ճանապարհով գումար վաստակել:

Աղքատությունը, համաձայն մյուս փորձագետի կարծիքի, դառնում է ապրելակերպ, մշակույթ: Եվ կան մարդիկ, ովքեր հանդիսանում են այդ մշակույթի կրողները: «Այսպիսի մարդիկ երբևէ չեն փոխի իրենց արժեհամակարգը: Ավելին՝ նրանք իրենց մտածելակերպը և արժեքները փոխանցում են իրենց սերունդներին»:

Փորձագետներից մեկը նշում է, որ սխալ քաղաքականության արդյունքում մենք ունենք այն, ինչ ունենք՝ ծայրահեղ ծանր պայմաններ, սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակ և աղքատ բնակչություն: Սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանք են դառնում մի քանի այլ խնդիրներ, որոնք արտացոլվում են տարբեր ոլորտներում.

- մուրացկանությունը և թափառաշրջիկությունը՝ որպես սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանք,
- հակասոցիալական վարքի դրսևորումը՝ որպես սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանք,
- առողջապահական ոլորտում արտացոլվող խնդիրներ,
- կրթության ոլորտում արտացոլվող խնդիրներ:

Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հետևանք է դառնում ***մուրացկանությունը և թափառաշրջիկությունը***: Խմբի մասնակիցներից մեկը նշում է, որ այն երեխան՝ ով ամեն օր ականատես է լինում իր տանը տիրող մթնոլորտին, հաճախ ստիպված է լինում գնալ որոշակի քայլերի՝ սնունդ գտնելու համար: Աղքատ ընտանիքի երեխան ամեն օր տեսնում է ծնողի անտանելի ապրումները, նրա նյարդային, լարված լինելը և այլն: Երեխան այդ ամենից խուսափելու, ընտանիքի լարված իրավիճակի ականատեսը չլինելու նպատակով հեռանում է տնից, սկսում զբաղվել տարբեր վատ սովորություններով, որոնցից մեկը նաև մուրացկանությունն է: Չէ՞ որ նա որևէ կերպ պետք է գոյատևի: Ի հակադրություն այս կարծիքի, փորձագետներից մեկը նշել է, որ իրականում մուրացկանությունը սոցիալական վիճակի, աղքատության պատճառ չէ, այլ ծնողի կողմից երեխայի սխալ դաստիարակության պատճառ: Նա նշել է, որ մուրացկանությամբ զբաղվում են հենց մուրացիկ մարդկանց երեխաները, քանի որ ծնողը նույն

հոգեբանությամբ և արժեհամակարգով է դաստիարակում իր երեխային: Իհարկե, եթե խոսքը չի վերաբերում ծնողագուրկ երեխաներին, ովքեր իրենց գոյությունը պահպանելու համար են դիմում նման քայլի:

Անկախ ամեն ինչից, մուրացկանությունը հասարակության արատավոր երևույթներից մեկն է, որի զոհ են դառնում դեռևս նույնիսկ մանուկ հասակում գտնվող երեխաները:

***Հակասոցիալական վարք*** ասելով հասկանում ենք հանրության համար վտանգ ներկայացնող արարքների պարբերական դրսևորումը:

Փորձագետներից մեկը նշել է, որ անչափահասների շրջանում առավել տարածված են գողությունները: Հետազոտությանը մասնակցած փորձագետները չունենին Գյումրիում անչափահասների կողմից կամ նրանց ներգրավմամբ կատարվող իրավախախտումների կամ հակասոցիալական վարք դրսևորած երեխաների վիճակագրական տվյալներ, սակայն համեմատական կարգով կարելի է ասել, որ հակասոցիալական 10 դեպքից 8-ը գողություններ են, որոնք իրականացվում են հիմնականում անապահով ընտանիքների երեխաները: Ծնողները գործազուրկ են, երեխան միակողմանի ծնողագուկ է, կամ ընտանիքը բազմանդամ է, որի հետևանքով ծնողը չի կարողանում հոգալ հացի խնդիրը: Արդյունքում՝ երեխան ստիպված, երբեմն ծնողի գիտությամբ բռնում է հանցավոր ուղին: Այս երևույթը շատ վտանգավոր է, քանի որ երեխան գտնվում է անցումային շրջանում, և եթե ճիշտ ժամանակին չի հաջողվում հասնել նրան, որպեսզի չկիրառվի կալանավորում, ապա անչափահասը, հայտնվելով ուղղիչ հաստատություններում՝ ավելի է մասնագիտանում իր «նորընտրած մասնագիտության» մեջ: Հետագայում նման երիտասարդները հայտնվում են իրավապահների տեսադաշտում՝ ավելի լուրջ հանցագործություններ կատարած: Ճիշտ ժամանակին նման վարքագծի կանխումը և երեխային ծնողին հանձնելու հնարավորությունը խթան է հանդիսանում երեխայի հետագա սոցիալականացման և ինտեգրման համար: Փորձագետի կարծիքով, ոստիկանության անչափահասների հարցերով զբաղվող բաժինը թերևս թերանում է իր աշխատանքում: Այս բաժնի հիմնական ֆունկցիան այն է, որպեսզի հետևողական լինի բաժնում հաշվառված կամ իրավապահ մարմինների տեսադաշտում գտնվող անչափահասների նկատմամբ վերահսկում իրականացնելիս: Նրանք պետք է աշխատանքներ

իրականացնեն թե՛ դպրոցում, և թե՛ ծնողների ու երեխայի հետ: Եթե նման հետևողական աշխատանք լինի, ապա հանցագործությունների թիվը կպակասի:

Փորձագետը գտնում է, որ նման վարքի դրսևորման առաջնային պատճառը սոցիալական վիճակն է, այնուհետև՝ ծնողի անտարբեր վերաբերմունքը: Ցավալին այն է, որ նման սովորույթները հետագայում դառնում են բնավորություն ու վարքագիծ:

Սոցիալ-տնտեսական պայմաններից բխող բազմաթիվ խնդիրներ արտացոլվում են **առողջապահական ոլորտում**: Փորձագետներից մեկը ցավով նշում է. «Դեռ խորհրդային տարիներին բուժօգնությունն անվճար էր և բոլորը՝ ապահով թե անապահով, չափահաս թե անչափահաս անխտիր օգտվել են անվճար բուժօգնությունից: Այսօր, մեր հասարակությունում, նույնիսկ երեխաների և անչափահասների շրջանում կան այնպիսի հիվանդություններ, որոնցից կարելի էր խուսափել ժամանակին կանխարգելման կամ համապատասխան բուժման դեպքում»: Անվճար բուժօգնությունը և անվճար կրթությունը առավելագույնս ապահովում են հասարակության լիարժեք անդամ հանդիսանող անձի ձևավորումը: Երիտասարդները հաճախ գնում են բանակ արդեն իսկ բազմաթիվ հիվանդություններ ունենալով: Երեխաները ծնվում են բազմաթիվ արատներով, այնուհետև ծնողների ֆինանսական անկարողության, անբարենպաստ պայմանների արդյունքում հանրապետությունում աճում է մանկամահացությունը: Թերսնվածությունը, կյանքի դժվար պայմանները հանգեցնում են անառողջ սերնդի ձևավորմանը: «Եթե պետությունը կարողանար ապահովել երեխայի համապատասխան բուժօգնությունը, անվճար կրթությունը, ապա արդյունքում մենք կունենային առողջ, կրթված զինվոր և ապագա մայրիկ»:

Փորձագետներից մեկը նշել է, որ անապահով ընտանիքներում 0-5 տարեկան երեխաները հիմնականում ունենում են արհեստական սննդի և դեղորայքի պակաս: Այս ընտանիքները անհրաժեշտության դեպքում չեն կարող, ի վիճակի չեն գնել արհեստական սնունդ, կամ հիվանդությունների դեպքում՝ դեղորայք: Համաձայն ոլորտի փորձագետի կարծիքի՝ պետությունն ապահովում է 0-9 տարեկան երեխաների, սոցիալապես անապահով, ծնողազուրկ, հաշմանդամ և այլ արտոնյալ պայմաններում գտնվող

երեխաների դեղորայքը, սակայն այդ դեղորայքի չափաքանակն այնքան սակավ է, որ չի բավականեցնում բոլոր ընտանիքներին: Ֆոկուս-խմբի մասնակիցներից երկուսը նշում են, որ պետական կառույցներից իրենք ոչ մի օգնություն չեն ստանում: Նրանք երբևէ չեն ստացել անվճար դեղորայք, անգամ ծանր վիճակում երեխային հիվանդանոց տեղափոխելու դեպքում, չեն ստանում համապատասխան բուժօգնություն: Խմբի անդամներից մեկի երեխան կարիք ուներ շտապ վիրահատության, սակայն նա չէր կարողանում անգամ մուտք գործել ՏԻՄ կառույց, որպեսզի ստանար որևէ աջակցություն:

Առողջապահական հարցերով փորձագետը նշել է, որ իրենք աշխատում են ծնողների հետ և տալիս են տեղեկատվություն սննդի, պատվաստանյութերի վերաբերյալ, թերևս դա է պատճառը, որ դիմելիությունը բուժհաստատություններ, պոլիկլինիկա բավականին շատ է և բոլորն էլ պատրաստակամ են պատվաստումներ ընդունում: Բացի դա, անապահով կամ աղքատ լինելը ոչ մի կապ չունի պատվաստումներից հրաժարվելու հետ: «Հակառակը՝ ապահովված ընտանիքներում ծնողներն առավել հաճախ են հրաժարվում դեղորայքից, համարելով, որ դա վնասակար է երեխայի առողջությանը»: Այստեղ խնդիրն ապատեղեկատվության մեջ է, քանի որ շատերը հարևաններից, շրջապատից լսելով տարբեր պատմություններ, ընդունում են որպես ճշմարտություն և չեն հետևում երեխայի խնամքի բոլոր պայմաններին:

Ֆոկուս-խմբի անդամներից մեկը կարծում է, որ մեր երկրի պայմաններն այնպիսին են, որ հնարավոր չէ մեծացնել առողջ և պաշտպանված երեխա: Չի կարելի մեղադրել ծնողին, քանի որ վերջինս մտածում է օրվա հացի հայթայթման մասին: Սակայն մեկ այլ փորձագետ նշել է, որ ի վերջո առողջ երեխան ծնվում և ձևավորվում է հոգեպես և բարոյապես առողջ ընտանիքում: Եվ միշտ չէ, որ պատճառը աղքատությունն ու գործազրկությունն է:

Մոցիլալ-տնտեսական ծանր պայմանների հետևանք են նաև *կրթական ոլորտում* առկա բազմաթիվ խնդիրներ: Իրականությունն այն է, որ դպրոցներում միևնույն դասարանում կարող են սովորել թե՛ աղքատ ընտանիքի երեխան և թե՛ ապահովված ընտանիքի երեխան: Ֆոկուս-խմբի ներկայացուցիչներից մեկը նշում է, որ դպրոց չհաճախող երեխաները չեն խուսափում ուսումից, ավելին՝ յուրաքանչյուր երեխա ցանկանում է լինել կրթված, գրագետ, լավ մարդ: «Բայց երբ մտնում է դասարան և տեսնում է, թե երեխաներից մեկը ինչպես է հագնված, իսկ ինքը՝ քաղցած է, տեսնում է այդ


սոցիալական տարբերությունը, դիմացինի առավելությունները և իր թերությունները՝ այլևս չի ցանկանում գնալ դպրոց»։ Նման խնդիր առկա է նաև քոլեջներում։ Փորձագետը նշում է, որ վերջին մի քանի ամիսների ընթացքում տասը երեխա դուրս է եկել քոլեջից արտերկիր, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնություն /ՌԴ/ մեկնելու նպատակով։ Ծնողները պատճառաբանում են, որ ընտանիքի ծանր սոցիալական պայմանների պատճառով երեխաները մեկնում են աշխատելու։ Կան նաև դեպքեր, որ երեխաները սովորում են պետպատվերի շրջանակում, նույնիսկ կրթաթոշակ են ստանում, սակայն միևնույն է, թողնում են ուսումը կիսատ։ Փորձագետը նշեց նաև երեք դեպք, երբ երիտասարդներն, ունենալով առողջական խնդիրներ, չեն կարողացել համապատասխան բուժում ստանալ Հայաստանում և մեկնել են ՌԴ։

***Սոցիալ-հոգեբանական խնդիրներ և ծնողավարության հմտությունների բացակայության խնդիր:*** 1989 թվականին, որպես երկրաշարժի հետևանքով առաջ եկած սոցիալ-հոգեբանական խնդիրների արձագանք, ֆրանսիացիները ստեղծել էին հոգեբանական կենտրոն Գյումրիում, որտեղ մասնագետները հիմնականում աշխատում էին իրավախախտ անչափահասների և նրանց ընտանիքների հետ։ Շեշտը դրվում էր իրավախախտի դաստիարակության, վերականգնման և իրավախախտության կանխարգելման վրա։ Համաձայն փորձագետի կարծիքի. մոտեցումը բավականին արդյունավետ էր և հետաքրքիր։ Այնուամենայնիվ, քանի որ ֆինանսավորումն այլևս պետք է դառնար պետության պարտավորությունը՝ կենտրոնը 2006 թվականից դադարեց գործել։ Ասել է, թե պետությունն այլևս չէր տեսնում սոցիալ-հոգեբանական խորհրդատվության անհրաժեշտություն։

Ֆոկուս-խմբի անդամներից յոթի կարծիքով, սոցիալ-հոգեբանական խնդիրների պատճառ է դառնում դպրոցում առկա անտարբեր, հաճախ նաև արհամարհական վերաբերմունքը։ Այդ անտարբերությունն առկա է ոչ միայն աշակերտների, նրանց ծնողների կողմից, այլև ուսուցիչների, ընդհուպ նաև տնօրենի կողմից։ Նրանք շեշտում են, որ երեխան որքան էլ լավ առաջադիմություն ցուցաբերի, միևնույն է երբ ծնողը չի ներկայանում դպրոց համապատասխան ձևով՝ նվերներ, ծաղիկներ և այլն, ապա այս ամենն անդրադառնում է երեխայի նկատմամբ վերաբերմունքի և նրա գնահատականների վրա։ Այլ խնդիր է նաև, երբ ուսուցիչը պարտադրում է

բոլորին արտաժամյա պարապմունքների համար վճարել, սակայն ծնողը չունի այդ գումարը և հրաժարվում է:

Փորձագետը նշում է, որ այս ամբողջ կապակցված շղթան հանգեցնում է նրան, որ մենք ունենում ենք բազմաթիվ բարդություններով, խաթարված հոգեկան աշխարհով անչափահաս: Ավելանում է «Ես լավը չեմ, ես արժանի չեմ» մեղանիստիկ մտածողությամբ, դեպրեսիվ վիճակում գտնվող երեխաների թիվը, ոմանք էլ ցուցաբերում են ագրեսիվ վարք և բարկություն շրջապատի հանդեպ:



**Նկ.1**

Փորձագետներից մեկը նշել է, որ հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներով հետաքրքրվող մարդիկ էլ շատ քիչ են: Շրջապատին գրեթե չի հետաքրքրում նրանց որպիսությունը: Ոչ ոք չանք չի գործադրում որևէ բան փոխելու, մի փոքրիկ աջակցություն ցուցաբերելու համար: Երեխաները չեն կարողանում ինտեգրվել և դառնալ հասարակության լիարժեք անդամ:

Այսպես, նկ. 1-ում պատկերված է անապահով ընտանիքի անչափահաս երեխայի էկոգրամը: Էկոգրամում պատկերված են այն փոխհարաբերությունները, որոնք առկա են անչափահասի կյանքում: Կետագծերով նշված են խաթարված փոխհարաբերությունները, իսկ հոծ գծերով՝ առավել կայուն կապերը: Պատկերը հնարավոր է եղել ստեղծել ֆոկուս խմբի բոլոր մասնակիցների կարծիքների հիման վրա: Անչափահաս երեխայի պատկերի շուրջ ընդգծված երկնագույն երանգը ցույց է տալիս նրա ինտեգրման գործընթացի խաթարված լինելը, այսինքն՝ դեզինտեգրացիայի առկայությունը:

Իհարկե, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, աղքատությունն ու գործազրկությունը իրենց հետքը թողնում են երեխայի զարգացման և սոցիալականացման գործընթացի վրա, սակայն փորձագետները կարևորում են նաև ծնողների ծնողավարական հմտությունների թերի լինելը, հաճախ նաև իսպառ բացակայությունը: Փորձագետներից մեկը գտնում է, որ շատ կարևոր է, որպեսզի ծնողը իր գիտելիքներով չլինի աղքատ: Աղքատ ապրելակերպը չի կարող խոչընդոտ հանդիսանալ ծնողի համար դաստիարակել լավ մարդ, օգնել իր երեխային սոցիալականացման գործընթացում և պաշտպանել նրան տհաճ և վատ սովորույթներ ձեռք բերելուց: Փորձագետը նշել է, որ կան ընտանիքներ, որտեղ նույնիսկ աղքատության պայմաններում ծնողն այնքան ճիշտ է կազմակերպում ընտանիքի կյանքը, որ երեխան ոչ մի սոցիալ-հոգեբանական խնդիր չի ունենում: Չմոռանանք, որ այսօրվա ծնողների մեծ մասը հետերկրաշարժյան տարիներին դժվար պայմաններում մեծացած, տնտեսական նոր հարաբերությունների անցնող երկրի դժվարությունների միջով անցած, ուշադրությունից զուրկ մնացած երեխաներն են, ովքեր տեսել են պատերազմ, երկրաշարժ և այլն: «Դժվարին իրավիճակներում ամենից շատ անուշադրության են մատնվում երեխաները, նրանց հիշում են միայն կերակրելու և հագցնելու համար»: Սակայն փորձագետը նշել է նաև, որ ծնող-երեխա խաթարված փոխհարաբերությունների խնդրի հիմնական պատճառը աղքատությունը չէ, քանի որ նույն բարձիթողի վիճակում կարող է հայտնվել նաև ապահովված ընտանիքի երեխան:

Շատ ծնողներ կան, որոնք զգում են երեխայի դաստիարակության նոր մոտեցումների և ծնողավարման նոր հմտությունների կարիք, սակայն Գյումրի քաղաքում չկա որևէ սոցիալ-հոգեբանական, ծնողավարության

հմտություններ ուսուցանող կենտրոն կամ որևէ կառույց, որը կտրամադրի նման ծառայություններ: Այսպիսով, ինչպես պայքարել այս երևույթի դեմ, եթե նույնիսկ հնարավորություններ չկան ընտանիքներին համապատասխան հմտություններ ուսուցանելու համար:

**Կրթական, դաստիարակչական և մշակութային խնդիրներ:** 2014թ-ի մարտ ամսին ՀՀ Ոստիկանապետը հանդիպումներ ունեցավ ՀՀ մարզային ուսումնական հաստատություններին կցված ոստիկանների հետ: Հանդիպման ընթացքում գլխավորապես նշվում էր հետևյալը. «Դպրոցներում հավաքվում են տարբեր հոգեբանությամբ, տարբեր ընտանիքներից երեխաներ և փորձում են ամեն մեկն այդ վայրում ինքնահաստատվել: Այդ ճանապարհին նրանց պետք է օգնություն ցուցաբերել: Ոստիկանության աշխատակիցը պետք է բացատրի նրանց, որ իրենք ոչ միայն չպետք է գոհ դառնան տարբեր արատավոր երևույթների, այլև հասկանան, որ ապագա ունեն իրենց առջև: Արատավոր երևույթների վերացման հիմնական գրավականն է ոստիկանի մասնագիտական, անձնային և քաղաքացիական բարձր որակը»<sup>1</sup>:

Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշվեց երեխայի կրթության կարևորությունը:

Փորձագետներից մեկը նշել է, որ այսօր մեր ընտանիքներում պակասել է սերը ուսման նկատմամբ, գրքի նկատմամբ: Նա գտնում է, որ երեխան ընտանիքի հայելին է և նա կրկնօրինակում և արտաբերում է այն վարքագիծը որը տեսնում է իր ծնողների կողմից: Մարդը հակված է ընկալել վարքագիծը, այլ ոչ թե խոսքերը:

Փորձագետներից երեքը վստահ են, որ երեխաների՝ ուսման նկատմամբ վերաբերմունքը կախված է ծնողի դաստիարակությունից: Օրինակ, Գյումրիին կից մի գյուղում հայտնաբերվել է մեկ ընտանիք, որտեղ երեխան գուրկ էր հողաբաշխ խոսքից և կենդանական ձայներ էր արձակում: Այստեղ հարց է առաջանում՝ ինչպես է հաղորդակցվում ծնողը իր երեխայի հետ: Արդյոք սա ծնողի անտարբերության արդյունքը չէ: Գյումրիում կան մի շարք դեպքեր, երբ երեխաները սկզբունքորեն չեն հաճախում դպրոց, մատնված են անգործության և ծնողը մեկնաբանում է, որ դպրոց գնալու անհրաժեշտություն չկա: Փորձագետը նշել է նաև անհասկանալի և անբարոյական բնույթի

<sup>1</sup> Տեղեկատվության աղբյուրը լրատվամիջոցներն են:



հեռուստահաղորդումների առկայությունը: Չէե որ երեխայի սոցիալականացման գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև հեռուստատեսությունը: Այնուամենայնիվ, այստեղ ևս կարևորվում է ընտանիքի ֆունկցիան: Ծնողը պետք է կարողանա վերահսկել երեխայի հետաքրքրությունները և նախասիրությունները: Արևմտյան շատ երկրներ արդեն եկել են այն մտքին, որ ընտանիքի միջոցով կարելի է հասնել շատ բանի: Նույնիսկ երեխաների պաշտպանության կոնվենցիայում ասվում է, որ մինչև տասնչորս տարեկան երեխայի կրոնը ընտրում է ծնողը: Պետք է ձևավորել ազգային մտածողություն: Որոշ դեպքերում կարելի է հետևել այլ երկրների փորձին, սակայն ազգային մտածողությունը սպեցիֆիկ է յուրաքանչյուր ազգի համար: Փորձագետը գտնում է, որ պետք չէ պլանավորել ընտանիքը: Մենք սկսել ենք պլանավորել ընտանիքը, իսկ տնտեսությունը թողնում ենք ինքնահոսի: Անհրաժեշտ է իրականացնել կրթական ծրագրեր՝ ծնողների գիտակցական մակարդակը բարձրացնելու նպատակով, այլ ոչ թե ասել, թե աղքատությունը պատճառն է անգրագիտության:

Շատ հաճախ այդ անգրագիտության պատճառով ոտնահարվում են նաև երեխաների իրավունքները: Առկա են բազմաթիվ հետևանքներ, որոնք բխում են հենց դաստիարակչական, մշակութային հիմնախնդիրներից:

«Հայ ընտանիքում, հայ ժողովրդի համար երեխան սրբություն է: Ծնողները նույնիսկ 30 տարեկանում շարունակում են իրենց զավակին վերաբերվել որպես անչափահաս երեխայի: Մշակութային առումով թվում է, թե երեխայի իրավունքները շատ լավ պաշտպանված են, սակայն միևնույն ժամանակ այդ պաշտպանվածությունը բերում է իրավունքների խախտման: Ծնողն ինքը՝ որոշ հանգամանքներից ելնելով, անգիտակցորեն կարող է ոտնահարել սեփական երեխաների իրավունքները: Սրա հիմնական պատճառը իրավագիտակցական ցածր մակարդակն է»:

Առաջին խնդիրը **սոցիալական պաշտպանության** հարցն է: Այստեղ կարևորվում է ծնողների իրազեկումը իրենց երեխաների իրավունքների վերաբերյալ: 10 տարեկան երեխան կարող է կարծիք հայտնել, և ծնողը զարմանա՝ կարծելով, որ երեխան չունի դրա իրավունքը: Բացի դա, ծնողները կարող են վաճառել երեխային հասանելի գույքը, առանց մտածելու, որ երեխան հետագայում կմնա անօթևան:

Կարևոր խնդիր է երեխայի *կրթական աղապտացիայի* խնդիրը:

Փորձագետներից յոթը նշել են, որ շատ ծնողներ արգելում են երեխաներին հաճախել դպրոց: Երեխաների նկատմամբ ճնշումները կամ բարձրթողի վիճակը խանգարում է երեխայի ադապտացիային և կրթական գործընթացին: Հասարակությունը դպրոցին տվել է միայն մեկ ֆունկցիա՝ կրթական ֆունկցիա: Սակայն սա ճիշտ չէ: Դպրոցը նաև իրականացնում է դաստիարակչական աշխատանքներ: Երեխան օրվա մեծ մասը անց է կացնում դպրոցում ընտանիքից դուրս: Դպրոցը կրթում է երեխային նրա սոցիալական վարքի վերաբերյալ, նրա էթիկայի, արժեհամակարգի վերաբերյալ: Իսկ եթե մենք արգելում ենք երեխային հաճախել դպրոց, ապա թողնում ենք նրա բարձրթողի վիճակում և արդյունքում երեխան ցուցաբերում է հակասոցիալական վարք:

***Կրոնական ուղղվածություն:*** Մինչև 10 տարեկան երեխային ՀՀ օրենքով արգելվում է ներգրավել որևէ կրոնական ուղղվածության մեջ, սակայն կան դեպքեր, երբ նույնիսկ նորածին երեխային ծնողները տանում են աղանդավորական հավաքների:

***Բռնություններ:*** Ծնողները օրինաչափ են համարում երեխային ծեծի ենթարկելը, հոգեբանական բռնություն կիրառելը: Ընտանիքի անդամներից մեկը մյուսի հանդեպ բռնություն կիրառելը ևս ազդում է երեխայի հոգեկան աշխարհի վրա: Մեր հասարակությունում սա գերխնդիր է, քանի որ ծնողը համարում է, որ նման «դաստիարակչական» մեթոդներ կիրառելը իր իրավունքն է:

## Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով և վերլուծելով ֆոկլուս-խմբի մասնակիցների և փորձագետների հետ իրականացված քննարկումները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

*Ֆոկլուս-խմբի տասը մասնակիցների կարծիքով այս բոլոր հիմնախնդիրների պատճառ է հանդիսանում՝ գործազրկությունը և աղքատությունը, իսկ փորձագետներից բոլորի կարծիքով հիմնական պատճառը՝ գործազրկությունը, ծնողավարական հմտությունների բացակայությունն ու ընտանիքի արժեհամակարգն է:*

Սոցիալապես անապահով ընտանիքների գերխնդիրը թերևս սոցիալական ինտեգրացիայի չափազանց ցածր մակարդակն է: Երեխան ծննդյան առաջին վայրկյանից տեսնում է անբարենպաստ պայմաններ, աղքատություն: Շրջապատի համար նա աղքատ ընտանիքի երեխա է, ով ունի բազմաթիվ խնդիրներ: Երեխան մեծանում է իր փակ միջավայրում և գրեթե չի շփվում ոչ ոքի հետ: Նրա շփումները սահմանափակ են, կապերը՝ խաթարված: Երեխայի սոցիալականացումն իրականանում է մի միջավայրում, որտեղ չեն բավարարվում երեխայի ոչ միայն առաջնային պահանջմունքները /սնունդ, հագուստ և այլն/, այլև նա չունի պաշտպանվածության զգացում, չի ստանում սեր, խնամք և իր անձի նկատմամբ հարգալից վերաբերմունք: Հետագայում երեխան հայտնվում է դպրոցում, որտեղ բևեռայնությունն օրեցօր աճում է և երեխան համարվում է այն խմբի ներկայացուցիչ, որը մշտապես պիտակավորված է, անտարբերության է մատնված: Այս խնդիրների հետևանք է դառնում ոչ լիարժեք անձի ձևավորումը և զարգացումը:

Հետազոտության տվյալների վերլուծության արդյունքում թվում է, թե աղքատության հիմնախնդրի հաղթահարման արդյունքում կկարողանանք խույս տալ մնացած բոլոր տեսակի խնդիրներից, հետևանքներից: Սակայն առավել խորաթափանց հայացք նետելիս հասկանում ենք, որ մեր իրականության մեջ իսկապես կան այնպիսի իրավիճակներ, երբ ծնողներն իրենք են պատճառ հանդիսանում երեխայի ոչ լիարժեք անձի, քաղաքացու ձևավորման համար: Ծնողի արժեհամակարգը, մեր հասարակությունում առկա մշակութային սովորույթները կարծես իրենց բնականոն «աշխատանքն են կատարում», սակայն մենք բոլորս որպես հասարակության մասնիկներ պետք է

գիտակցենք, որ այդ գործընթացում չի կարելի անուշադրության մատնել այն թերություններն ու բացթողումները, որոնք ազդում են ապագա սերնդի կայացման վրա: Մյուս կողմից, մենք գրեթե «փակ աչքերով» ընդունում ենք արևմտյան, եվրոպական սովորություններն ու արժեքները: Սակայն այդ գլոբալացման գործընթացները ևս իրենց հետքն են թողնում մեր հասարակության վրա:

Հայ հասարակությունում առկա են բազմաթիվ հակասական երևույթներ: Մեր կառավարությունն ընդունում է կյանքից կտրված օրենքներ, սակայն չի փորձում հասկանալ արդյոք այդ օրենքի ընդունումն ինչպիսի՞ հետևանքների կբերի և արդյո՞ք հասարակությունը պատրաստ է ընդունել նոր օրենքը: Մենք մի կողմից ասում ենք, որ երեխան պետք է ապրի ծնողի հետ, չտեղափոխվի խնամքի հաստատություններ, մյուս կողմից խնամքի հաստատություններն շահագրգռված են ունենալ սաներ, քանի որ ֆինանսավորվում են երեխաների քանակով, և բացի դա համարում ենք, որ ծնողներից շատերն ի վիճակի չեն դաստիարակել երեխաներին: Նպատակահարմար ենք գտնում երեխայի խնամքի հաստատություն տեղափոխելը: Մի կողմից ասում ենք, որ ծնողը չի տիրապետում ծնողավարական հմտություններից, մյուս կողմից հարց ենք տալիս. իսկ որտեղ են այն կառույցները, կազմակերպությունները կամ մասնագետները, ովքեր պետք է իրականացնեն այդ գործառնությունը: Չէն որ ի վերջո սա պետության պարտավորությունն է: Տարբեր ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ իրականացնում են բազմաթիվ ծրագրեր, սակայն ՀԿ-ներն աշխատում են դոնորների համար, դոնորներն իրականացնում են ծրագրեր ՀԿ-ների համար, իսկ շահառուն շարունակում է ապրել այնպես, ինչպես ապրում էր:

Պետությունը պետք է ապահովի նաև իր քաղաքացու պաշտպանվածությունն ու բարեկեցությունը, սակայն ինչպե՞ս վարվի այն ծնողն, ով հուսահատ դիմում է պետական տարբեր կառույցների որևէ հարցով և իրեն տեղեկացնում են, որ ոչնչով օգնել չեն կարող և դա իրենց լիազորությունների մեջ չի մտնում: Արդյո՞ք այս դեպքում ևս աղքատությունն ու գործազրկությունն են պատճառները: Այս բոլոր խնդիրները մեր պետության, մեր հասարակության և առհասարակ յուրաքանչյուրիս խնդիրն է, և յուրաքանչյուր քաղաքացի պետք է իր պարտավորությունը համարի որևէ կերպ օգնել, աջակցել իր կողքին ապրող, կյանքի դժվարին պայմաններում հայտնված քաղաքացուն:

## Առաջարկությունների փաթեթ

### Սոցիոլոգիական հետազոտության վերլուծության արդյունքում մշակվել են առաջարկություններ հետևյալի մասին.

#### Կրթության ոլորտ

- Դպրոցներում, ուսումնական հաստատություններում ցանկալի է իրականացնել մանկավարժների վերապատրաստում՝ դաստիարակչական և հոգեբանական նոր հմտությունների ուսուցանման նպատակով:
- Ոստիկանների՝ անչափահասներին ավելի լավ հասկանալու, նրանց հետ շփման և համագործակցության վերաբերյալ նոր մեթոդներ և հմտություններ ուսուցանելուց հետո, անհրաժեշտ է բարձրացնել և ամրապնդել ոստիկանության աշխատողի դերը կրթական ոլորտում:
- Հնարավոր է խթանել ծնողների ակտիվ ներգրավվածությունը երեխաների կրթական և դաստիարակչական գործընթացին՝ ապահովելով ծնողների մասնակցությունը աշակերտական խորհուրդների հանդիպումներին և կազմակերպվող այլ միջոցառումներին:
- Քանի որ Գյումրի քաղաքի դպրոցներում բացակայում են ֆիզիկական պատրաստվածության համար նախատեսված դահլիճները, ապա ցանկալի է ստեղծել ամենաանհրաժեշտ պայմանները, որպեսզի երեխաները որոշ չափով զբաղվեն ֆիզիկական պատրաստվածությամբ:
- Պարբերաբար, յուրաքանչյուր ամիս ցանկալի է իրականացնել կրթական, ուսուցողական ծրագրեր ընտանիքների համար՝ իրազեկելով վերջիններիս երեխայի խնամքի, առողջության, ֆիզիկական զարգացման, սանիտարահիգիենիկ պայմանների ստեղծման ծնողների և երեխաների իրավունքների վերաբերյալ և այլն:

#### Առողջապահության ոլորտ

- Տարբեր տեղեկատվական բուկլետների, թռուցիկների թողարկմամբ հնարավոր է բարձրացնել տեղեկացվածության մակարդակը ծնողների շրջանում՝ պատվաստանյութերի, դեղորայքի և բժշկական այլ պարագաների վերաբերյալ:
- Առկա է խիստ անհրաժեշտություն՝ իրականացնել ծնողավարության հմտությունների ուսուցանում՝ հղի կանանց և նորաստեղծ ընտանիքների շրջանում:

### **Սոցիալական ոլորտ**

- Ցանկալի է առավել հաճախ իրագեկել անապահով ընտանիքներին համայնքում առկա թափուր աշխատատեղերի և գործող կազմակերպությունների վերաբերյալ, քանի որ առկա է տեղեկացվածության պակաս:
- Անհրաժեշտ է հնարավորինս շատ իրականացնել կրթական ծրագրեր՝ անհրաժեշտ հմտությունների կամ գիտելիքների ձեռքբերման նպատակով:
- Ընտանիքներին անհրաժեշտ է մատուցել անվճար սոցիալ-հոգեբանական ծառայություններ, քանի որ Գյումրի քաղաքում բազմաթիվ ընտանիքներ ունեն այդ խորհրդատվության կարիքը:

### **Իրավապաշտպանության ոլորտ**

- Անհրաժեշտ է ՀՀ ոստիկանության և քննչական բաժինների տեսանելի վայրերում փակցնել տեղեկատվություն բերման ենթարկված անձանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ:

**Փորձագիտական հարցման ընթացքում ուղղորդող գործիք.**

**Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր**

1. Նկարագրե՛ք, ինչդրում եմ Ձեր բաժնի/բաժանմունքի աշխատանքային գործունեությունը:
2. Ինչպիսիե ինդիքների հետ եք բախվում Ձեր աշխատանքային գործունեության ընթացքում:
3. Որոնք են Շիրակի մարզի անչափահաս երեխաների և նրանց ընտանիքների հիմնախնդիրներն այսօր:
4. Նշե՛ք, ինչդրում եմ, այն ոլորտները, որտեղ առկա են ինդիքներ:
5. Բացատրե՛ք, ինչդրում եմ, այդ ինդիքների առկայության պատճառները:
6. Նշե՛ք, ինչդրում եմ, այն գործոնները, որոնց արդյունքում երեխաները բացակայում են դպրոցից և խուսափում են ուսում ստանալուց:
7. Ըստ Ձեզ, ինչուե են երեխաներն ինքնակամ լքում ընտանիքը:
8. Իենչն է դրդում անչափահաս երեխային զբաղվել մուրացկանությամբ:
9. Ինչպեես եք Դուք/Ձեր կառույցը աջակցում Գյումրու ԱԳԲ-ում գրանցված և/կամ հաշվառված երեխաներին ու նրանց ընտանիքներին:
10. Ինչպեես կարելի է շտկել լորտում առկա հիմնախնդիրները:
11. Ինչպեես և ինչպիսիե մեխանիզմներով է հնարավոր պայքարել առկա հիմնախնդիրների պատճառների դեմ:
12. Առկա են արդյոք ոլորտում օրենսդրական բացեր: Որոնք են այդ բացերը:

### Լրացուցիչ տեղեկատվություն

Քանի որ ծրագրով նախատեսվում էր անապահով ընտանիքներին տրամադրել խորհրդատվություն սեփական իրավունքների և այլ իրավապաշտպանության խնդիրների վերաբերյալ, ապա որպես լրացուցիչ տեղեկատվություն հարկ է նշել, որ ծրագրի շրջանակներում խորհրդատվություն են ստացել 72 ընտանիք: Ընտանիքներից 88%-ը դիմել է հետևյալ խնդիրներով՝ սեփականաշնորհման հետ կապված իրավաբանական խնդիրներ, բանկային գործարքների, գրավադրման հետ կապված խնդիրներ, հայրության ճանաչման իրավաբանական նշանակության հարցեր, կոմունալ վճարների, սպասարկման հետ կապված խնդիրներ: Սակայն պետք է կարևորել այն փաստը, որ դիմողների 60%-ը ցանկանում է գումարային, նյութական աջակցություն ստանալ: